

«Սուբհանդակը» № 225, առնելով արտասահմանեան թերթերից գրում է «Սամաթիա բնակեալ Սօֆի մայրապետ, դիմած ըլլալով պատրիարքարան, որպէս զի իր անշարժ կալուածներուն և գոյքերուն պաշտօնական արձանագրութիւնները կատարուին և մնան էջմիածնի վանքին, կտակաց հոգաբարձութեան քարտուղար նշան էֆ, երկու քահանաներու հետ կը կատարէ այդ արձանագրութիւնը, Կտակուած գոյքերուն արժէքը 2500 սոկիէն աւելի կը կարծուի»:

Խ Ո Բ Հ Բ Դ Ա Ծ Ա Ի Թ Ի Ի Ե

«Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն ի մարդիկ հաճութիւն».

(Պերք. Ենթ. 1910 թ. № 52).

Մեզնից համարեա երկու հազար տարի առաջ, Երկնային անտեսանելի բարձունքում փրկութեան ծարաւի մեղսամած աշխարհի վերայ լոելի եղան հրեշտակային ուրախարար աւետիքի այս խօսքերը, և այդ օրեց ոկոսած ամեն տարի նրանք հնչում են քրիստոնեայ հաւատացեալ աշխարհի ականջին:

«Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»: Որքան պայծառ և հանդիսաւոր խընդութիւն է լուսում այս խօսքերի մէջ, մարդկային մեղքերի իշխանութիւնից աղատուելու խնդութիւն, դէպի նոր կեանքը վերածնութեան բերկըութիւն: Հաւատի ու աղօթքի որպիսի ոգեսրութիւն է չնչում այս կէս հրեշտակային, կէս մարդկային նուագը, որ աւերում է երկնքը և երկը միացումն մի աստուածային ուրոյ և հաշտութեան սկզբունքով: Եւ որպիսի սրանչացմամբ են լցնում մինչև այսօր այս հնչիւնները, իսկական հաւատացողների սրտերը, հաւատացողների, որոնք տաճար են գալիս աղօթք և փառաբանութիւն վերառաքելու նրան, որ իւր հետ աշխարհ բերեց խաղաղութիւն և եղբայրութիւն:

Բայց ուր են այդ խաղաղութիւնն ու եղբայրութիւնը, որի գալստեամբ արգէն 19 դար է, որ քրիստոնեայ մարդկութիւնը հրճուում է: Ամեն մի քայլափոխում իրական կեանքը չէ՝ հերքում արդեօք հրեշտակային աւետիքը: Ուզ էլ մտիկ

անես, թէ անցեալում և թէ ներկայում-մենք չենք տեսնի ոչ աշխարհի մէջ խաղաղութիւն և ոչ մարդկանց մէջ հաճութիւն։ Քրիստոնեայ ժողովուրդների պետական պատմութիւնը նոյնպէս լի է պատերազմներով, արիւնհեղութեամբ, փոխադարձ ատելութեամբ, զօրեղագոյների տիրապետութեամբ, ինչպէս էր մինչև քրիստոնէութիւնը ժողովուրդների պատմութիւնը։ Պէտք է արդեօք կրկնել համաշխարհային ճշմարտութիւնը, թէ գոյութեան միջազգային կռութե երեսյթները այժմ աւելի կատաղի են քան հին պատմութեան անցեալ գարերում։ Այժմ, արդարեն, կարծես աւելի նուազ է զգացում ազգայնական առանձնութիւնը, քիչ է նկատում զանազան ազգութիւնների մէջ ատելութիւն մէկը միւսի վերաբերութեամբ սակայն ազգայնական մարդատեցութիւնը դեռ շատ զօրեղ է և այժմեան հասարակութեան մէջ, որի մասին մինք ստանում ենք շօշափելի ապացոյցներ քրիստոնեայ պետութիւնների պարլամենտական ժամանակադրութեան մէջ։ Նայելով «ընտրեալ» իտելլիգենսա մարդկանց ազգայնական ատելութեան այս կատաղի բռնկումներին, մարդս ակտամայ կասկածում է, թէ արդեօք նախաքրիստոնէական հեթանոսութեան մէջ չե՞նք Ապաքէն այն էլ պէտք է ի նկատի ունենանք, որ հեթանոսը հետևողաբար էր վարւում։ Նա իւր հաւատալիքին ու համոզմունքին չեր հակասում, երբ օտարազգիներին դոհ էր գարձնում իւր ատելութեանը։ Նա կրօնական որ և է արդելք չունէր։ Բայց երբ սիրոյ, ներողութեան, և Աստուծոյ առաջբոլոր մարդկանց ի Քրիստո կատարեալ հաւասարութեան քարոզը ճշմարտութիւն դաւանող մարդիկ անզուսապ ատելութիւն են ցոյց տալիս դէպի այլազգիները, որքան զօրեղ պէտք է լինի նրանց սրտում ատելութիւնը, եթէ նրանց չէ հաշտեցնում նոյն իսկ նրանց հաւատը։ Քրիստոնէական բարոյականութեան յառաջադիմութիւնը դեռ աւելի սակաւ է, կը նկատենք մենք, մեր հասարակական, անհատական և ընտանեկան կեանքում։ Երբեմն շատ են խօսում, մարդասիրութեան յաջուզութեան մասին, մեր ժամանակի մարդասէր գաղափարների մասին։ Բայց ի՞նչ բանի մէջ է երկում այդ մարդասիրութիւնը, մինչև անդամ մի կողմն զնելով նրա քրիստոնէական բնաւորութեան խնդիրը։ Ասում են, անհետացել է ստրկութիւնը, քաղաքացիական և քրէական օքէնսդրութիւնը աւելի մարդասիրական է, դասակարգերի միջն յարաբերութիւնները աւելի են մեղմացել։ Սակայն շատ շատերը ապացուցանում են, որ հին ստրկութեան փոխարէն նոր տնտեսական ստրկութիւն է երեան եկել, որի խստութիւնը այժմ աւելի դդալի է ստրկացածնե-

ըին քան հին անձնական ստրկութեան կապանքները։ Օրէնսդրութիւնը յիրաւի աւելի մարդասէր է դարձել, բայց ո՞վ կարող է ասել, թէ այն բոլորովին քրիստոնէաբար է վարւում դէպի մարդիկ։ իսկ որ գլխաւորն է, իսկապէս իրականանում են այն սկզբունքները, որոնք տեսականապէս համարւում են օրէնսդրական։ Խնչ վերաբերում է դասակարգերի միջև եղած յարաբերութեանը, այստեղ հազիւ թէ մի քան դէպի լաւը փոխուած լինի քրիստոնէական երկար գարերի պատմութեան մէջ։ Թէ առաջ և թէ այժմ, վերջի վերջոյ հզօրները շահագործում են և պարտապան են դարձնում թոյլերին չքաշուելով ոչ միայն բարոյական պահանջից, այլև մինչև անդամ ոտնակուս անելով իրաւունքի սահմանները։ Տարբերութիւնը միայն այն է, որ հին ժամանակներում գնահատում և նախապատւութիւն տրւում էր ծագմանը, կոչումին, իսկ այժմ հզօրութեան հմայքը տրւում է գլխաւորապէս իշխանութեան և հաստատութեան արտօնութեամբ։ Դրա համար էլ կեանքի գոյութեան տնտեսական կռիւը այնպիսի սուր կերպարանք է ստացել այժմ, որպիսին չէ եղել երբէք։ Նա ժողովրդի ըոլոր հիւթը ծծում է և մարդկային միլիոնաւոր զոհ հերով յարդարում է քաղաքակրթութեան ուղին։ Կարո՞ղ ենք ասել թէ մարդկութեան քրիստոնէական պատմութեան մէջ անձը անվիճելի կերպով և բարոյապէս կատարելագործում է։ Բայց եթէ քրիստոնէական բարոյականութեան եղբայրութեան և սիրոյ սկզբունքները թափանցած լինէին անհատական կեանքի մէջ, այն ժամանակ նրանք անկասկած կը կերպարանափոխէին հասարակական կեանքը, որովհետեւ հասարակութիւնը կազմուած է անհատներից և գործակցելով հասարակական կեանքին՝ կազմում է անհատական տրամադրութիւններց։ Դրա համար էլ քրիստոնէական յառաջադիւմութեան անհերքելի կերպով ապացուցանում է թէ քրիստոնէութիւնը թոյլ է անհատների մէջ։ Բայց մասնաւորապէս նայելով ժամանակակից քրիստոնեայ մարդկութեան վարքը ու բարքին, մենք յիրաւի նրա մէջ գտնում ենք հեթանոսական տրամադրութեան բոլոր երեսյթները։ Նոյն իսկ հեթանոսներն էլ բոլորովին գաղան չէին, և զուրկ մարդկային գգացմունքից երար չէին կլանում։ Իսկապէս նրանք էլ այնպիսի մարդիկ էին, ինչպէս մեր ժամանակի մարդիկն են, և պատահում էին նոյնպիսի բարք, մարդասէր, և ազնիւ մարդիկ և ընդհակառակն, ինչպէս են քրիստոնեայ հասարակութեան անդամները։ Հեթանոսական աշխարհի մեջ յայտնի

մարդկային բարքերից և մեզ ժամանակակից նոյն խոկ քըխստունեայ ժողովուրդների բարոյականութիւնից դատելով՝ հիմք չկայ ենթադրելու թէ «վատ» և «լաւ» մարդկանց համեմատութիւնը այժմ դէպի շահաւելու կողմն է փոխուել։ Ի հարկէ կան կենցաղավարութեան այնպիսի գծեր, որ յատուկ էին հեթանոսութեան և այժմ անհետացել են բոլորովին։ Բայց դրան մեծ կարևորութիւն պէտք է չտալ, ի նկատի ունելով մ'յն տօամաղըութիւնը, որը երևան է եկել «ի մարդիկ հաճութիւն» բառերով։ Մնում է քրիստոնեայ ընտանիքը։ Մի՛թէ նրա մէջ որ և է առաջաղիմութիւն չէ գործել քրիստոնէական կրօնքը։ Պէտք է չկրկնենք յայտնի գատողութիւնը, թէ քրիստոնէութիւնը ընտանիքը բարձրացրել է կոնջ նշանակութիւնը, ամուսինների ծնողների, դաւակների ևն յարաբերութիւնը աւելի է մարդկային գարձել։ Այս բոլորը որոշ մտքով ուղիղ է։ Բայց խոստովանենք խզմմտանքով, խաղաղութիւնն ու սէրը մեզ ժամանակակից ընտանիքի մէջ աւելի՞ է քան հեթանոսների մէջ, որոնք չգետէին քրիստոնէութիւնը։ Այսպիսի համեմատութեան ժամանակ, ի հարկէ պէտք է լիք առնել հասարակութեան այս կամ այն գասակարգել ընդհանուր զարգացման համապատասխան աստիճանը։ Թէև այդպիսի համեմատութեան հետեանքը ճիշդ էլ չլինի, բայց որքան գիտենք, միիթարական էլ չէ։ Գուցէ առաջ սարդկային զգացմունքները աւելի կոպիտ էին արտայայտում, մարդկային փոխադարձ յարաբերութեան մէջ աւելի անհամըեր էին։ Բայց ամեն ոք քաջութիւն չի ունենայ այժմեան ընտանիքը համարել լի սիրով և խաղաղութեամբ, առ այդ շատերը քաջութիւն չեն ունենայ։

Աւելեմն «խաղաղութեան և ի մարդիկ հաճութեան» աւետիքից 19 դար յետոյ էլ, հարկ է տրտմութեամբ խոստովանել թէ այն ինչ որ իրականութիւն պէտք է լինէր, դեռ ակնկալութեան առարկայ է, ինչպէս էր Քրիստոսից առաջ։ Եւ յոյս էլ չկայ, թէ ապագայում երբ և իցէ իրականութիւն կստանայ կեանք այդ իդէալը, որ աւետել էին քրիստոնէութեան առաջին աւետաբերները իրանց նուագում։ Նայելով քրիստոնեայ մարդկութեան զարգացման ընթացքին, տիրութեամբ նկատում ենք, որ քրիստոնէական գաղափարը չէ աճում, այլ ընդհակառակն, թարշամում է։ Քաղաքակերթ աշխարհի քրիստոնեայ ժողովուրդները արագօրէն մօտենում են այն սահմանին, ուր ոչ մեայն քրիստոնէութիւնը, այլ և ընդհանրապէս կրօնական հաւատը կորցնում են հեղինակութիւնը, և տողորում են կամ անկերպարան, անորոշ կրօնական տրամադրութեամբ և

կամ տարակուսութեամբ ու անհաւատութեամբ։ Յոյս չկայ թէ նրանց մէջ գոնէ քըիստոնէական քարոյականը կը քարձրանայ։ Մեր ժամանակի գաղափարական հոսանքները ոչ թէ քըիստոնէական կը օնի հիմքի վերայ, այլ նոր տիպի զանազան անհաւատ մտածողների սօցիալական տեսութիւնների նիւթապաշտական հաշիւնների վերայ են հիմնւում։ Յոյս դնել նոր ժողովուրդների նոր քըիստոնէական քաղաքակրթութեան վերայ, ժողովրդի, որ ապագայում պատմութեան բեմի վերայ երևելու է, թէ և ցանկալի է, բայց քիչ հաւանական է։ Ի զուր չեն ասում, թէ պատմութիւնը կը կնեռում է։ Եւ եթէ յիրաւի, պատմական կեանքի հրապարակում երևէին թարմ քըիստոնէական ոյժեր, գրանք էլ անկասկած կը կատարէին իրանց պատմական կեանքի զարգացման շրջանը այնպէս, ինչպէս կատարել և կատարում են Եւրոպայի այժմեան ժողովուրդները։

Բայց ի՞նչ է նշանակում մինչև այսօր երգւող նուագը Քըիստոսի գալստեամբ աշխարհում խաղաղութիւն և մարդկանց մէջ հաճութիւն հաստատուելու մասին։ Միթէ՝ այդ խօսքերը խարուսիկ հրապոյր են և կամ անիրագործելի երազ։ Ոչ Բայց գրանք, հաւանօրէն, նշանակում են այն, ինչ որ հսարաւոր է գործել և ո՛չ այն՝ ինչ որ անհրաժեշտ է։ Քըիստոս աշխարհ ըերեց խաղաղութիւն և եղբայրութիւն, ոչ այնպէս պատրաստ գրութեան մէջ, որ հրաշագործ ուժով յանկարծերապարանափոխէր մարդկային կեանքը, այլ նա միայն մարդկանց ցոյց տուեց հնարաւորութիւնը՝ հասնելու մէկին և միւսին։ Քըիստոսի վարդապետութիւնը ինքն ըստ ինքեան իւր մէջ ամփոփում է ամեն տեսակ թշնամութիւն հաշտեցնելու և փոխադարձ սէք հասաւատելու գրաւականը։ սակայն որպէս զի իսկապէս ստեղծուի այդպիսի քըիստոնէական տրամադրութիւն՝ պէտք է ամբողջովին համակուել Քըիստոսի վարդապետութեամբ, իւրացնել նրան ըոլոր էութեամբ, յարմարուել նրա հետ, մինչ այն աստիճան, որ իւր կամքը ըոլորովին հպատակեցնի իւր քըիստոնէական գիտակցութեանը։ Բայց այդ միշտ էլ պակասել է և պակասում է քըիստոնեայ մարդկութեանը։ Բանականութեամբ և մասամբ էլ սրտով ընդունելով քըիստոնէութիւնը, մարդիկ միշտ էլ համարեա սակաւ անգամ են համակւում նրանով, գրա համար էլ կեանքն ու գաւանութիւնը դժուարանում են լիովին համաձայնել իրար հետ։ Քըիստոնէական քաղաքակրթութեան այս թոյլ տեղում էլ թագնուածէ նրա թուլութեան գաղտնիքը, որով չի կարողանում իսկապէս կերպարանափոխել մարդկային կեանքը և իրապէս իրա-

գործել մարդկային ընկերութեան իդէալը, որ նկարագրում
է վերև յիշուած օրհներգութեան մէջ: Բայց այս բանի մէջ
մեղաւոր է ոչ թէ ինքն քրիստոնէութիւնը, այլ մարդկու-
թիւնը, նա շատ առերկոյթ է իւրացնում աւետարանական
քարոզութիւնը, չափազանց անուշադիր է վերաբերում հա-
ւատի ներշնչումներին ու խղճի ձայնին և չափազանց գան-
դաղ է ունինդրում քրիստոնէական գիտակցութեան պահանջ-
ներին: Այստեղից է մշտական, քրիստոնէական պատմութեան
ամբողջ ընթացքում, հաւատի և կեանքի այս հակընթացու-
թիւնը, և այն փողքոդութիւնը, որ իւրաքանչիւր քրիստոնեայ
և քրիստոնեայ հասարակութիւն կարծում է, թէ քրիստո-
նէութեան պահանջները անիրագործելի իդէալներ են:

Յուսանք լաւագոյն ապագայի, հաւատացեալ մարդկու-
թեան աւելի քրիստոնէական եռանդ ցանկանա՞նք, հըաւելունք
ըոլոր ուժքը գործ դնել իսկական քրիստոնէական ընկերու-
թիւն ստեղծելու: Այս ըոլորը, կարծես ի զուր կը լինէր այն
հոգեկան մթնոլորտում, որի մէջ ապրում է այժմեան քաղա-
քակիրթ աշխարհի թթէ հաւատի դարերում, վառ բարեպաշ-
տութեան դարերում, քրիստոնեայ ժողովուրդները չկարողա-
ցան ստեղծել Աստուծոյ երկրաւոր թագաւորութեան նոյն
խոկ ամենահեռաւոր նմանութիւնը, ապագայում արդէն,
իհարկէ չեն ստեղծի: Սրա համար էլ կը կնելով հազարերորդ
անդամ հըեշտակային հանդիսաւոր օրհներգութեան բառերը,
մնում է միայն ցաւել տկար մարդկութեան վերայ, որ 19
դար առաջ ստացել է սիրոյ և խաղաղութեան մեծ գրաւա-
կանը և չի կարողացել օգտուել այս երկնային շնորհով:

Եթ սեպայ մասին զանախ շատ ու Թարգմ. Յուսիկ Արքայ. —
առաջնայու մաքանակություն զսիւրու վանքածու միքանու-
թաւութի լուսումից չմատանա՞ միշտականու չ ունի առաջ չմատանա՞ ունամն ունչ դայու մասմ լժմառու զնումնեւու
ուրե մինայու զցիւու զու՞ ոյ, մանջուռ մաս չմին ունչ ուրե
ումն քառ պատ: զմանն եւ առցւառու մամունմասունց չու՞ միշտաւու
շնորհ մի տիք քանի լու մանակություն չ նուռակու չ չ յնութագը չչ-
ուռակու նոյն մասի խոսուն և յուռական առաջնութամասի
մի նոր բնու տալու ունեանաւ չժ առի ֆիքան ցւած կառաջ
ունեած ունու տոք ու մամունք չչ զանա՞ ուրե խոսուն նորապատան
մամունյու ունչ զայը լժմառանա՞ միշտայ մի նումայու ուրե
ումն ուրանի չժ նուքած յու՞ ուրե մամն մի առնեալ ազարու մայս
ունչ ու ունչ ունչ